ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Հուլիսի 18-ին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 23 քաղաքացի. դրամական օգնության համար դիմել է վեց, աշխատանքի տեղավորման՝ տասը, շինարարություն կատարելու թույլտվության, տանիքի վերանորոգման, որդու դեմ հարուցված քրեական գործի համար միջնորդության, կորցրած հողամասի և գյուղտեխնիկայի համար փոխհատուցման, մարզի հաշմանդամների թենիսի մրցումների կազմակերպման աջակցության, երեխաների ժամանցի կազմակերպման, պետպատվերի շրջանակներում վիրահատվելու հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման խնդրանքով դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են շինարարություն կատարելու թույլտվության, տանիքի վերանորոգման, որդու դեմ հարցուցված քրեական գործի հետ կապված, հողամասի և գյուղտեխնիկայի փոխհատուցման, մարզի հաշմանդամների թենիսի մրցումների կազմակերպման աջակցության, երեխաների ժամանցի կազմակերպման, պետպատվերի շրջանակներում վիրահատվելու վերաբերյալ դիմումները: